ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» ապրիլի 2018թ. N 97

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ,ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 101 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով.

կարգադրում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման բաշխումն ըստ առանձին բնագավառների,գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների,ենթակայությանը հանձնված կազմակերպությունների՝համաձայն հավելվածի:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կառավարության տարածքային քաղաքականության և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունն ըստ բնագավառների համակարգման և բաշխման մասին>> N 101 կարգադրությունը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 15.08.2018 10:49:07 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2018 թվականի օգոստոսի 15-ի
N 97 կարգադրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ Գ.ՄԻՐԻՋԱՆՅԱՆ՝

Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով,*ներքին առդիտի*,զարգացման ծրագրերի և վերլուծության,հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների,միջազգային կապերի հաստատման բնագավառներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆ՝

Քաղաքաշինության, տրանսպորտի, ճանապարհաշինության,բնակարանային և կոմունալ տնտեսության,իրավական և մասնագիտական հսկողության իրականացման, երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառներ:

Մարզպետի տեղակալը իր լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար կարող է նաև հանձնարարականներ տալ իր համակարգման ներքո չգտնվող կառուցվածքային ստորաբաժանումներին և մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ՝

Առողջապահության և սոցիալական ապահովության, սոցիալական աջակցության, կրթության,մշակույթի, սպորտի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառներ.

Մարզպետի տեղակալը իր լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար կարող է նաև հանձնարարականներ տալ իր համակարգման ներքո չգտնվող կառուցվածքային ստորաբաժանումներին և մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Գ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ՝

Գյուղատնտեսության և բնապահպանության, հողաշինության և հողօգտագործման, արտակարգ իրավիճակների, քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային նախապատրաստության բնագավառներ:

Մարզպետի տեղակալը իր լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար կարող է նաև հանձնարարականներ տալ իր համակարգման ներքո չգտնվող կառուցվածքային ստորաբաժանումներին և մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ՝

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, քարտուղարության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, իրավաբանական բաժնի, անձնակազմի կառավարման բնագավառներ:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը իր լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար կարող է նաև հանձնարարականներ տալ իր համակարգման ներքո չգտնվող կառուցվածքային ստորաբաժանումներին և մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ